

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1916թ. Չայ Չեդափոխական դաշնակցության Բաքվի կոմիտեի նախաձեռնությամբ ծրագրավորվում և Անդրկովկասի տարբեր վայրերում իրենց ապաստանը գտած հայ փախստականների շրջանում իրականացվում է տեղեկությունների հավաքագրումը Արևմտյան Չայաստանի հայ բնակչության կոտորածների կազմակերպման և իրականացման վերաբերյալ՝ «Վշտապատում» անունով, որի նպատակն էր «ճշտել վերջին պատերազմի պատճառով Թուրքիայում հայերի ունեցած զոհերի քանակը, նիւթական կորուստների ծավալը, կուլտուրական վնասի չափը, այլև գծել հայերի կրած սարսափների ու տանջանքների իսկական մերկ պատկերը»:¹

Տեղեկություններ հավաքողների ներկայացված էին հետևյալ հիմնական հարցադրումները՝

Ա.- նախկին վիճակի ճշտումը և ներկա դրությունը, որն իր մեջ ներառում էր պարզել բնակավայրը, բնակչության քանակը, այդ թվում հայ և օտար, ի՞նչ և ինչքա՞ն ապրանք են ունեցել՝ տավար, ոչխար, ցորեն և այլն, հավաքել տեղեկություններ բնակավայրում եղած եկեղեցիների, վանքերի, դպրոցների, մշակութային հաստատությունների, կորած կամ ոչնչացված հնությունների, հազվագյուտ իրերի, ձեռագրերի և այլնի, գյուղի ներկա վիճակի մասին:

Բ.- պատերազմի հայտարարության միջոցին հայերի կրած զրկանքներն ու ճնշումները, որի ընթացքում պետք է պարզվեր, թե ինչպե՞ս է կատարվել հայերի զորածողովքը թուրքերի կողմից, բռնագրավումները, «նվիրատվությունը», բեղելը, տարապարհակ աշխատանքը, հայ զինվորների վիճակը բանակում, եղե՞լ է արդյոք պահանջ և ճնշում հայերի վրա հանդես գալու դաշնակից պետությունների դեմ:

Գ.- ջարդ և տեղահանություն հարցախումբը, որն ամենածավալունն էր, նպատակ ուներ պարզել, թե ե՞րբ է զգացվել գալիք աղետը, ինչպե՞ս, կա՞ն ապացույցներ, որ վաղուց էր ծրագրավորված, ե՞րբ և ի՞նչ պարագաների տակ սկսվեց ջարդն ու տեղահանությունը, ու՞մ դեկավարությամբ, ու՞մ հրամանով և ու՞մ ձեռքով (զորք, քուրդ, ոստիկան, խուժան), ջարդերի եղանակը, տեղը, զոհերի քանակը, ինչպե՞ս են վարվել հասարակության տարբեր խավերի հետ, ի՞նչ ճանապարհներով անցան տեղահանվածները և դեպի ու՞ր, այդ ընթացքում եղած զոհերը, տառապանքը, բռնաբարությունը, մահմեդականացումը և այլն, տեղական մյուս ժողովուրդների վերաբերմունքը ջարդի ու տեղահանության միջոցին (թուրք, քուրդ, հույն, եվրոպացի), մասնավորապես գերմանացի զինվորականների դերն ու վարմունքը: Անհրաժեշտ էր ճշտել նաև, թե որտեղ է տվյալ պահին ժողովրդի փրկված մնացորդը և ի՞նչ վիճակում, ի՞նչ է եղել շարժական և անշարժ ունեցվածքը:

Դ.- ինքնապաշտպանության վերաբերյալ հարցախումբը նախատեսում էր պարզել, թե ե՞րբ, ինչու՞, ինչպե՞ս և ինչո՞վ սկսվեց ինքնապաշտպանությունը, ովքե՞ր էին կազմակերպիչները, քանի՞ հոգի, դեպքերի հաջորդականությունը, տևողությունը, վախճանը, կորուստները, դիմադրողների և կառավարության մեջ եղած հարաբերությունները այդ ընթացքում, տեղական մյուս տարրերի և եվրոպացիների բռնած դիրքը ինքնապաշտպանության հանդեպ, եղե՞լ են անհատական, ցրիվ ինքնապաշտպանության դեպքեր, ուր, ինչպե՞ս:

Ե.- գաղթ ու փախուստ. այս բաժնում տեղեկություն պետք է հավաքվեր, թե ե՞րբ և ինչպե՞ս սկսվեց գաղթը, ո՞ր ճանապարհով, ի՞նչ պարագաներում, ի՞նչ զրկանքների, հիվանդությունների, հալածանքների ու հարձակումների ենթարկվեցին տեղահան-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 1. գ. 421, ք. 94:

վածներն, որտեղ, անձնական կորուստների թիվը, որտե՞ղ են գրվում այդ պահին, կա՞ն հայրենիք վերադարձածներ, որևէ բան մնացե՞լ է նրանց գույքերից, ի՞նչ վիճակի մեջ կան ու՞մ ձեռքին է:

Տեղեկությունների հավաքման ընթացքում անհրաժեշտ էր հավաքել նաև վավերաթղթեր.

I) Լուսանկարներ.- տեղահանության և կոտորածների միջոցին կատարած վայրագությունների իրական դեպքերը, ամեն տեսակ բարբարոսությունների հետքերը, կատարված ավերումները:

II) Փաստաթղթեր.- պետական ու ազգային հաստատությունների հեռագրեր, նամակներ, հրահանգներ, մատյաններ, թուղթեր, ազդեր, պաշտոնյաների հիշատակարաններ ու այս կարգի այլ գրություններ՝ կամ բնագիր, կամ որևէ կերպով վավերացված պատճենը, ինչպես նաև թուրքական լրագրերի կարևոր համարներ:

III) Օտարների վկայություններ.- հյուպատոսների, միսիոներների և մասնավոր անհատների կողմից գրած նամակներ, հիշատակարաններ, զեկույցներ, հայտնած կարծիքներ և այլ տեսակի վկայություններ, եթե հնարավոր է՝ քուրդերի և թուրքերի վկայություններ:

IV) Հայ ականատեսների վկայություններ.- ա) իրազեկ կամ գործի մեջեղած անհատների հիշատակարանները, նամակները, հուշերը. բ) զոհերի ապրումները և անձամբ ներկա գտնված ականատեսների բերանացի պատմածները:

Վեջի պարագայում տեղեկություն հավաքողին զգուշացվում էր, որ գրի առնելիս երբեք չպետք է մոռանալ պատմողի ով լինելը, դեպքի տեղը, թվականը, հնարավորինս պարզել զոհերի անունները և թիվը, նաև՝ ոճրագործների անունները: Ցանկալի էր կարևոր դեպքերի մասին ունենալ իրարից անկախ մի քանի հոգու պատմությունները, պետք էր ամեն կերպ խուսափել, որ դրանց մեջ չլինի դատողություն, գնահատություն և փիլիսոփայություն: Նույնպես պետք էր չթողնել, որ պատմողը գրական ստեղծագործության դիմի կամ չափազանցնի, այլ միայն պարզ, կարծ ու զուտ դեպքերը թվով, անունով արձանագրի:

V) Վիճակագրական տեղեկություններ.- նախկին վիճակի և ներկա դրության, կազմած տեղն ու տեղը, անձամբ, ստուգումից հետո ուսումնասիրողի կողմից:

VI) Քարտեզներ.- կազմված նույն նպատակով, նույն մարդկանց ձեռքով և նույնպես անձնական ստուգումից հետո.²

Մշակված հարցացուցակներով Հայկ Աճեմյանը և Ա. Հացագործյանը (Աշտարակ, Ապարան), Համբարձում Գալստյանը (Նախիջևան), Սուրեն Մելոյանը (Քարավանսարա, Դիլիջան), Գարեգին Ներկարարյանը (Էջմիածին, Սուրմալու), Շիրին Եղիազարի Հակոբյանը (Կողբ), Նշան Տիրացույանը և Գրիգոր քահ. Տեր-Գրիգորյանը (Ալեքսանդրապոլի գավառ, Շիրակ), Վարոս Սարգսյանը (Կարս), Գարեգին Թուրիկյանը և Ամատունին (Կարին, Քղի), Վահան Պետրոսյանը (Պարսկահայք) և ուրիշներ³, որոնք իրենց իրենց մի դեպքում անվանում են քննիչ, մի այլ դեպքում՝ նյութեր հավաքող, երրորդ դեպքում՝ գրի առնող, շրջում են Անդրկովկասի այն բոլոր վայրերով, որտեղ բնակվում էին ինչպես արևմտահայ, այնպես էլ պարսկահայ փախստականներ, լինում են Բաքվի, Թիֆլիսի, Դիլիջանի, Աշտարակի և այլ վայրերի որբանոցներում, գրի են առնում եղեռնը վերապրածների վկայությունները իրենց բնակավայրերում իրականացված կոտորածների մանրամասնությունների մասին: Իսկ ազատագրված

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1. գ. 421, թ. 94-95:

³ Առայժմ հնարավոր չի եղել բացահայտել Թիֆլիսում (մեկ հոգի), Բաքվում (երկու հոգի) և այլ վայրերում տեղեկություն հավաքողների անունները, որովհետև նրանք չեն ստորագրել տեղեկությունների ներքո, կամ ստորագրել են ծածկանունով:

Արևմտյան Հայաստանում՝ Կարինում և շրջակա գավառներում փաստահավաք աշխատանքները իրականացվել են հիմնականում Գ. Թուրիկյանի և Ամատունու կողմից, միաժամանակ այստեղ նշանակալից քանակ են կազմում ականատեսների ինքնագիր վկայությունները:

Ինչպես նշվեց, հարցացուցակը կազմված էր այնպես, որ հնարավոր լիներ ճշգրիտ տեղեկություններ հավաքել ինչպես մարդկային, այնպես էլ նյութական և մշակութային արժեքների կորստների վերաբերյալ: Երբեմն նույն բնակավայրի վերաբերյալ վկայություններ տալիս մի խումբ համագյուղացի գաղթականներ, որոնց վկայությունները հաճախ համադրվում էին այլ վայրերում բնակվող նույն բնակավայրից այլ գաղթականների վկայությունների հետ:

Փաստահավաք աշխատանքները ղեկավարել է Ռոստոմը (Ստեփան Ջորյան), գործուն մասնակցություն են ունեցել Անդրանկը, որը 1917թ. Թիֆլիսում սկսել էր հրատարակել «Հայաստան» օրաթերթը, Վահան Թոթովենցը, Սեբաստացի Մուրադը, Հակոբ քահ. Խաչվանքյանը:⁴

Փաստահավաք աշխատանքները հեշտությամբ չեն իրականացվել, եղել են դժվարություններ, և դրանցից առաջինը անհրաժեշտ նյութական միջոցների և դրամի պակասն էր: Պահպանվել է Գարեգին Թուրիկյանի 1916թ. դեկտեմբերի 7-ի նամակը, ուղղված Բաքվի ազգային բյուրոյին, որտեղ հանդիպում ենք այսպիսի տողերի. «Թիֆլիզ պ. Անդրանիկին ուղարկելով ճամբայի ծախսի համար վճարած իմ 25 (քսան և հինգ) ռուպլի [հաշիվը], դուք կրնաք երևակայել, թե այդ գործը աւարտելու համար ուրիշ որքան ծախսեր ունեցած են: Ոչ մեկ մարմնէ ճանապարհածախս, թոշակ կամ ծախսի դրամ ստացած չեն: Կ'ակնկալեմ, որ գէթ ծախսերս նկատի ունենաք, որով հնարաւորութիւն ունենամ շարունակելու այս կարգի աշխատանք»:⁵

Փաստահավաք աշխատանքները իրականացվել են 1916-1917թթ. ընթացքում, թեպետ հայտնի են ավելի ուշ ժամանակաշրջանում գրի առնված վկայություններ: Մասնավորապես, 1914թ. դեկտեմբերին թուրքական զորքերի կողմից գրավված Բաթումի մարզի Արդվինի օկրուգի Արդանուճի տեղամասի Տանձոտ գյուղի հայ բնակչության զանգվածային սպանդի մասին վկայությունները գրի են առնվել 1919թ. փետրվարի 6-ին:⁶

Հավաքված վկայությունները, ինչպես երևում է Գ. Թուրիկյանի վերոհիշյալ նամակից, ուղարկվել են Բաքու, Ազգային բյուրոյին, մի մասը՝ անձամբ Ռոստոմին, մի մասն էլ՝ Անդրանիկի հրատարակած «Հայաստան» օրաթերթին, հետո դրանք հավաքվել են Թիֆլիսում, սկսել են խմբավորել ըստ վայրերի և ըստ թեմաների:⁷

Վարչատարածքային առումով այն բաժանվել է հինգ մասի՝ I) Վանի, II) Կարինի, III) Բիթլիսի, IV) Տիգրանակերտի և V) Խարբերդի նահանգների: Բացառությամբ Կարինի, պահպանվել և մեզ են հասել վկայությունների չորս ցուցակները: Յուրաքանչյուր վկայության վրա հռոմեական թվանշանով, ըստ վերոհիշյալ հերթականության նշված է նահանգի համարը, իսկ արաբական թվանշանով վկայության հերթական համարը: Վանի ցանկը բաղկացած է 109 վկայությունից և Վանի հայ երեսփոխան Ա. Վռամյանի թղթակցությունից տեղական իշխանության և Օսմանյան կառավարության հետ (32 փաստաթուղթ):⁸ Հիշատակված 109-ից բացակայում են 7 վկայություններ (12, 72-76, 83), իսկ Ա. Վռամյանի թղթակցությունը, որը եղել է օսմաներեն, պահպանվել է անբող-

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 140, թ. 1, ֆ. 227, ց. 1, գ. 454, թ. 1:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 2005, N 1:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 468, թ. 352րջ, գ. 478, թ. 20:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 469, թ. 1-11:

ջությամբ, դրանց հայերեն ձեռագիր թարգմանությամբ:⁹ Թեպետ Կարինի ցանկը չի պահպանվել, սակայն հռոմեական երկու թվանշանով համարակալված է 68 վկայություն, բացակայում է 11-ը (10, 12, 20, 29, 40-41, 49-52, 65): Բիբլիսի ցանկը բաղկացած է 77 վկայությունից,¹⁰ որոնցից բացակայում է 4-ը (2-4, 9): Տիգրանակերտի ցանկում ընդգրկված է 4 վկայություն, որոնք ամբողջական են,¹¹ իսկ Խարբերդի ցանկում կա 22 վկայություն,¹² ևս ամբողջական: Սակայն առկա են նաև 23 արխիվայի գործեր (423-426, 428, 430-432, 434-436, 438-442, 444-449, 453) հարյուրավոր վկայություններով, որոնք ընդգրկված չեն վերոհիշյալ ցուցակներում, և դրանք երևանի նահանգում (Աշտարակ, Ապարան, Էջմիածին, Սուրմալու, Կողբ, Նախիջևան) և Թիֆլիսում գրի առնված վկայություններ են: Այս հանգամանքը վկայում է, որ ցուցակագրվել են այն վկայությունները, որոնք գրի են առնվել Բաքվում, կամ ուղարկվել են Բաքու, իսկ չհաշվառված վկայությունները հավաքվել են Թիֆլիսում:

Բաքվում հավաքված վկայությունները ենթարկվել են նաև թեմատիկ մշակման. վկայությունների որոշակի հատվածների դիմաց լուսանցքներում նշանագրված են թվանշաններ: Պահպանվել է այդ թվանշանների մեկնությունը. 1.- նախկին վիճակը, 2.- զինվորական գրավում և զորաշարժ, ...5.- տեղահանության հրաման և տեղահանություն, 6.- մասնակի կամ հավաքական դիմադրություն, ...8.- արսորի ճանապարհը, ...10.- ճանապարհի վրա կոտորածներ և առևանգություն, ...12.- անձնասպանություններ ու կանանց դիմադրությունը և այլ այդպիսի 24 հարցադրում:¹³

Քանի վկայություն է հավաքվել, այսօր դժվար է ճշտել, քանզի Անդրկովկասի և Արևմտյան Հայաստանի շատ վայրերում, մասնավորապես Երևանում, Վանում գրի առնված վկայություններ չկան, այն դեպքում, երբ Երևանում կար գաղթականների հոծ բազմություն, իսկ Վանում և նրա շրջակայքում 1917թ. բնակվում էր շուրջ 30 հազար հայություն: Փաստեր կան, որ «Վշտապատումի» մի մասը Ձ. Եսայանը Բաքվից իր հետ տարել է արտասահման քարոզչական նպատակով օգտագործելու համար: Պահպանվել է Ռոստոմի Բաքվից 1918թ. ապրիլի 3-ին գրած նամակ Եգիպտոսի գործընկերներին. «Տիկին Ջապելը ձեզ կը պատմի մեր վիճակի մասին, թեև դա մինչև տիկնոջ Եգիպտոս հասնելը պատմական դարձած կը լինի: Տիկինը իր հետ բերում է «Վշտապատումի» նիւթերը: Պետք է օգտագործել լայն պրոպագանդի համար: Տիկինը ինքը կաշխատի»:¹⁴ Այսօր դժվար է գուշակել, ի՞նչ է տարել իր հետ Ձ. Եսայանը, գրի առնված վկայությունների բնագրերը, թե՞ դրանցից արտագրությունները: Հայտնի է նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920թ. հունվարի 10-ի նիստում որոշել է Թիֆլիսից Հայաստան տեղափոխել «Վշտապատումի» նյութերը և հանձնել արտաքին գործերի նախարարությանը, այն ըստ անհրաժեշտության օգտագործելու համար: Ահա այդ որոշումը.

«18. Լսեցին. Նոյնի¹⁵ զեկուցումը համաշխարհային պատերազմից հայերի կրած վնասների քննիչ հանձնաժողովի գործունեութեան մասին:

18. Որոշեցին. Նիւթերը հանձնել Արտաքին Գործերի Մինիստրիին: Առաջարկել «Վշտապատումին» նոյնպես իր նիւթերը հանձնել Արտաքին Գործերի Մինիստրիին»:¹⁶

⁹ Նույն տեղում, գ. 416:

¹⁰ Նույն տեղում, գ. 490, թ. 1-7:

¹¹ Նույն տեղում, գ. 492, թ. 1:

¹² Նույն տեղում, գ. 491, թ. 1-4:

¹³ Նույն տեղում, գ. 468, թ. 45-46:

¹⁴ Հայ հեղափոխական դաշնակցության կենտրոնական արխիվ, թղած. 339-3:

¹⁵ Խոսքը ՀՀ վարչապետ, արտգործնախարար Ա. Խատիսյանի մասին է:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 5:

«Վշտապատումի» նյութերը այսօր պահպանվում են Հայաստանի ազգային արխիվի երկու՝ «Մշակ» թերթի խմբագրության և Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվանի ֆոնդերում: Թե ինչպես են դրանք հայտնվել թիֆլիսում լույս ընծայվող թերթի խմբագրությունում, այսօր դժվար է ճշտել, սակայն ավելի քան 700 վկայություններ 1920-ական «Մշակ» թերթի խմբագրության այլ փաստաթղթերի հետ տեղափոխվել են Հայաստան և մինչև 1946թ. հունիսի 17-ը չկարգավորված վիճակում պահպանվել են Հայկոմկուսի կենտրոնի կուսակցական արխիվում, ապա նշված օրը հանձնվել են ՀԽՍՀ պետական արխիվ:

Ձեռնամուխ լինելով սույն ժողովածուի կազմման աշխատանքներին՝ որոշվեց հրապարակել բոլոր վկայությունները, առանց բացառության, ցույց տալու թուրքական իշխանությունների կողմից իրականացված հայ բնակչության կոտորածները՝ գյուղ առ գյուղ, քաղաք առ քաղաք:

Վկայությունները ականատեսներից հավաքվել են ջարդերից և տեղահանությունից ընդամենը մեկ տարի անց, ուստի, և մեծ է դրանց հավաստիությունը և վավերակայությունը, հետևաբար նաև դրանց արժեքը հայոց Մեծ եղեռնի համակողմանի ուսումնասիրման համար:

Ժողովածուն ունի հույժ պատմական, այսօր արդեն քաղաքական արժեք և նշանակություն, քանզի մեկ անգամ ևս ապացուցում է, որ երիտթուրքերի վարչակարգի կողմից իրականացրած հայոց ցեղասպանությունը եղել է նախօրոք ծրագրված և նախապատրաստված:

Հրապարակվող փաստաթղթերը խմբավորվել են ըստ նահանգների (վիլայեթների), գավառների (սանջակների), գավառակների (կազաների) և գյուղախմբերի (նահիեների): Բնակավայրերը ներկայացված են այբբենական կարգով: Այն փաստաթղթերը, որոնք տվյալներ են ներկայացնում մի քանի բնակավայրերի մասին, դրված են վարչատարածքային միավորների սկզբում: Հավելվածներում ներկայացված փաստաթղթերը թեև անմիջական կապ չունեն «Վշտապատում»-ի հետ, սակայն ականատեսների վկայություններ լինելով՝ դարձյալ ընդգրկվեցին սույն ժողովածուում:

Փաստաթղթերի հնագրագիտական ձևակերպումը իրականացվել է գործող կանոնների համաձայն: Ամեն մի փաստաթուղթ ունի խմբագրական վերնագիր, վկայության գրի առնելու թվականն ու վայրը: Եթե թվականն ու վայրը պարզել են կազմողների կողմից, ապա դրանք վերցվել են ուղղագիծ փակագծերի մեջ:

Փաստաթղթերում պահպանվել են շարադրանքի լեզուն և ոճը, կատարվել է ուղղագրական որոշ միջամտություն, ճշգրտվել են տեղանունները և անձնանունները: Եթե տեքստը ունի իմաստային բացթողումներ, ապա դրանք վերականգնվել են ուղղագիծ փակագծերի մեջ:

Ամեն մի փաստաթղթի բացատրագրում նշվել են արխիվային նիշերը, փաստաթղթի իսկությունը, վերարտադրման միջոցը: Փաստաթղթերի փոքր մասը նախկինում հրատարակվել է,¹⁷ բայց քանի որ սույն հրատարակությունը որակապես տարբերվում է նախորդից, ուստի և փաստաթղթերի բացատրագրերում դրանց հրատարակված լինելու փաստը չի նշվել:

Ժողովածուի գիտատեղեկատու համակարգը բաղկացած է փաստաթղթերի բովանդակային ծանոթագրություններից, բարբառային և օտար բառերի բացատրական բառարանից, անձնանունների և տեղանունների բացատրագրերով ցանկերից, փաստաթղթերի ցանկից: Ծանոթագրությունների համար օգտագործվել են ինչպես եղած գրականությունը և տարբեր բառարաններ, այնպես էլ բազմաթիվ արխիվային սկզբնաղբյուրներ:

¹⁷ Տե՛ս Վշտապատում: Հայոց մեծ եղեռնը ականատեսների աչքերով, Երևան, 2005:

